

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեղրյան Զինավոր Շահենի

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ԺԲ.00.06 «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Мегрян Зинавор Шагенович

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВА НА САМООПРЕДЕЛЕНИЕ В
МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.06 –Международное право

ЕРЕВАН-2014

Ատենախոսության թեման հաստատվել էր Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Վ. Վ. Քոչարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Յա. Կապուստին**
իրավաբանական գիտությունների
թեկնածու **Ե. Գ. Կիրակոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 5-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՂ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 3-ի:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ

Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Í àó÷í ûé ðóêî âî àèòàëü: èàí àèääò ìðèèè÷àñêèò í àóê,
âî òáí ò **Â. Â. Êî÷àðÿí**

Î Õèèèèüí ùá îîîî í áí òù: âî èòî ð ìðèèè÷àñêèò í àóê,
î ðî Õàññî ð **À. Ю. Капустин**

èàí àèääò ìðèèè÷àñêèò í àóê
Ե. Գ. Կիրակոսյան

Âáäöùäÿ î ðââî èçàèè: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 5-го декабря, 2014г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 3 ноября 2014г.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

В.Д. Аветисян

I. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը և դրա հետ կապված հարցերը ժամանակակից միջազգային իրավունքի առավել վիճահարույց հիմնախնդիրներից են: Իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի բովանդակության, ծավալի, իրացման ձևերի և միջոցների վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տարակարծություններ, որոնք առկա են ոչ միայն իրավունքի տեսաբանների, այլ նաև միջազգային հանրության առանձին անդամների դիրքորոշումներում: Անգամ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակող ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի և անվտանգության խորհրդի բանաձևերը ոչ միայն միասնական սահմանում չեն բովանդակում, այլև տեղ են տալիս տարբեր մեկնաբանությունների՝ պայմանավորված դրանց ընդունման ժամանակահատվածով կամ պատմական այն իրադարձություններով, որոնց կարգավորմանը դրանք միտված են եղել:

Դեռևս չլուծված իրավական վեճերի առիթ է տալիս ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցության հարցը: Մեկնաբանման կարիք ունի նաև միջազգային իրավական այլ սկզբունքները, ինչպես նաև ինքնորոշման իրավունքի իրացման ընթացքում ուժի գործադրման թույլատրելիության հիմնահարցը:

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը բազմիցս միջազգային և տարածաշրջանային անվտանգության ու խաղաղության ոտնահարման առիթ է հանդիսացել: Դրա բովանդակության տարաբնույթ մեկնաբանությունների հիման վրա ծավալվել են բազմաթիվ պատերազմներ, իրականացվել են նաև ահաբեկչական գործողություններ՝ դառնալով հարյուրավոր, իսկ երբեմն նաև հազարավոր մարդկային զոհերի պատճառ:

Էական հիմնախնդիրներից մեկը, որի շուրջ մինչ օրս շարունակվում են տարակարծությունները իրավաբանական գրականությունում, ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն են ժամանակակից միջազգային հարաբերությունների պայմաններում: Ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը իր հասցեատիրոջը՝ ժողովրդին, տալի՞ս է արդյոք անկախ պետականություն ստեղծելու հնարավորություն, թե՞ այն պետք է իրացվի միայն ներքին ինքնավարության ստեղծման ճանապարհով:

Իրավաբանական գրականությունում այդ հարցի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն. արևմտյան հեղինակների մի խումբ գտնում է, որ ինքնորոշման իրավունքը ստեղծվել է միայն կախյալ ժողովուրդների ապագադրությամբ և այդ միջոցով միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման նպատակով: Այս հեղինակների կարծիքով, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը ապագադրությամբ գործընթացի ավարտից հետո կորցրել է իր հիմնական առաքելությունը՝ արտաքին ինքնորոշման ձևը, և այսուհետև պետք է իրացվի միայն մայր պետության տարածքային ամբողջականության

պահպանման շրջանակներում՝ պետական կառավարմանը ժողովրդի մասնակցության և ներքին ինքնավարություն ստեղծելու միջոցով:

Վերջին տասնամյակներում տեղի ունեցած իրադարձությունները, սակայն, նոր մարտահրավերներ են նետում: Կոսովոյի պետականության ստեղծումը, իսկ այնուհետև նաև Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության հռչակագրերը, ինչպես նաև դրանց ճանաչումը մի շարք պետությունների կողմից նոր հարթության վրա են դնում արտաքին ինքնորոշման իրավունքի վերաբերյալ բանավեճերը:

Ի՞նչ հիմքով է միջազգային հանրությունը ճանաչում պարգևում մի նորանկախ սուբյեկտի, որը ստեղծվում է ի վնաս մայր պետության տարածքային ամբողջականության, սակայն մերժում նման ճանաչումը մեկ այլ սուբյեկտի պարագայում: Ի՞նչ հիմքով է ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը անօրինական ճանաչում անկախության այս կամ այն հռչակագիրը և կոչ անում միջազգային հանրությանը չհամագործակցել նորաստեղծ սուբյեկտի հետ, սակայն լռում և զերծ մնում որակումներից մյուս նորանկախ սուբյեկտների պարագայում: Առաջնորդվում են արդյոք պետությունները և միջազգային կազմակերպությունները միայն քաղաքական նկատառումներով, թե՞ վերջիններիս գործողություններում հնարավոր է նաև գտնել միատեսակ իրավական վարքագծի կանոններ:

Վիճահարույց իրավական հիմնախնդիրներից է նաև ժողովուրդների՝ որպես ինքնորոշման իրավունքի կրողների իրավասուբյեկտության հիմնահարցը: Արևմտյան գրականությունը զարգացել է ժողովուրդների իրավասուբյեկտության մերժման ճանապարհով, մինչդեռ խորհրդային գրականությունը, թեև ընդունելով ժողովուրդների իրավասուբյեկտությունը, քննարկել է այն միայն միջազգային կազմակերպություններում ներկայացված լինելու և ազգային-ազատագրական պայքար մղելու համատեքստում՝ բաց թողնելով մեկ կարևորագույն հիմնահարց՝ ինքնորոշման իրավունքի հնարավոր դատական պաշտպանության հիմնախնդիրը:

Ինքնորոշման սուբյեկտի՝ ժողովրդի դատական աստիճաններում հանդես գալու հնարավորությունից զրկված լինելու պատճառով, ինքնորոշման իրավունքը դեռևս երբեք չի դարձել ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող վճռի քննարկման առարկա (այն քննարկվել է միայն խորհրդատվական եզրակացությունների մակարդակում): Ուստի վիճահարույց է նաև ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության ենթակա լինելու հիմնահարցը:

Ժողովուրդների համապատասխան իրավասությունից զրկված լինելու պայմաններում առկա է արդյոք այլ պետություններում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ոտնահարման հարցերը սեփական նախաձեռնությամբ միջազգային դատարանում բարձրացնելու հնարավորություն՝ հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի ելակետային տեղն ու դերը միջազգային իրավունքի համակարգում:

Այս բոլոր հիմնահարցերը առավելապես կարևորվում են հայաստանի հանրապետության արտաքին քաղաքականության համատեքստում: Միջազգային

հանրության կողմից դեռևս չճանաչված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային իրավասուբյեկտությանը վերաբերող հիմնահարցերը միջազգային ամբիոններում մնում են չլուծված, ինչն ավելի է մեծացնում հայրենական գիտությունում տվյալ ոլորտի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հասկանալի է դառնում, որ քննարկվող սկզբունքը համակողմանի վերլուծության և վերագնահատման կարիք ունի, վերլուծություն, որը կաշկանդված չի լինի քաղաքական նկատառումներով և հիմնված կլինի միջազգային պայմանագրերի, միջազգային-իրավական փաստաթղթերի (միջազգային կազմակերպությունների բանաձևեր, միջազգային դատական ատյանների որոշումներ և այլ), պետությունների և միջազգային կազմակերպությունների պրակտիկայի համալիր ուսումնասիրության վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Սույն ատենախոսական հետազոտության նպատակն է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի տարբեր դրսևորումների բովանդակության բացահայտումը, դրանց իրացման միջազգային-իրավական մեխանիզմների պարզաբանումը: Աշխատանքի նպատակն է նաև պարզաբանել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի տեղն ու դերը ժամանակակից միջազգային իրավունքի սկզբունքների համակարգում: Ատենախոսության մեջ հատուկ տեղ է հատկացվում ինքնորոշման իրավունքի դատական և արտադատական հնարավոր ձևերի պաշտպանությանը:

Վերոնշյալ նպատակներին հնարավոր է հասնել հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով՝

- ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի պատմական զարգացման վերլուծություն և այդ սկզբունքի վրա հասարակական հարաբերությունների փոփոխությունների ազդեցության ուսումնասիրություն,
- ժողովուրդների ինքնորոշման իրավունքին անդրադարձող միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերի, Գլխավոր Ասամբլեայի հռչակագրերի համակարգային ուսումնասիրություն և մեկնաբանման տարբեր մոտեցումների համադրական քննություն,
- միջազգային իրավունքի սկզբունքի հասկացության պարզաբանում. այդ հասկացությունը տարբեր կերպ մեկնաբանող իրավաբանական գիտության տարբեր դպրոցների տեսակետերի համեմատություն,
- տարբեր սկզբունքների ակսիոլոգիական վերլուծություն, հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում վերջիններիս դերի, նշանակության և նպատակի պարզաբանում,
- միջազգային իրավունքի տարբեր սկզբունքների փոխներգործության եզրերի հետազոտում (արտաքին ինքնորոշման կախվածությունը մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքի ոտնահարումներից, ինքնորոշման սուբյեկտի տարածքային ամբողջականության հարգումը որպես ինքնորոշման արդյունավետ իրականացման երաշխիք և այլն),

• միջազգային իրավունքի *erga omnes* պարտավորությունների իրավական բովանդակության վերլուծություն. Վերջիններիս հիմքով երրորդ կողմերի՝ դատարան (ՄԱԿ-ի միջազգային դատարան) դիմելու հնարավորության հիմնավորում,

• *jus cogens* նորմերի և *erga omnes* պարտավորությունների հիմքով միջազգային հանրության մեջ առաջացող կոլեկտիվ և անհատական համապարտադիր վարքագծի կանոնների ուսումնասիրություն ինչպես որոշակի գործողություններից ձեռնպահ մնալու, այնպես էլ որոշակի գործողությունների դիմելու ճանապարհով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության տեսական հիմք են ծառայել միջազգային իրավունքի հանրահայտ հեղինակների դասական աշխատությունները, մենագրությունները և գիտական հոդվածները՝ նվիրված միջազգային իրավունքի տեսությանը, ինքնորոշման իրավունքի բովանդակությանը, միջազգային իրավունքի համակարգում ունեցած տեղին և դերին:

Ատենախոսական աշխատանքը հենվել է հանրահայտ միջազգայինագետ իրավաբանների աշխատությունների վրա, որոնց թվում են Յ. Բրաունլին, Ի. Լուկաշուկը, Գ. Տունկինը, Թ. Ֆրենքը, Է. ՄքՎիննին, Ա. Կասսեգեն, Օ. Չիստյակովը, Ա. Թալալանը, Մ. Փոմերանսը, Հ. Հանումը, Բ. Վուկասը, Ս. Ուիթլին, Ջ. Կունցը, Յ. Էվանսը, Մ. Ջաքերը, Հ. Կելսենը, Կ. Դեհրինգը, Փ. Թորնբերրին, Դ. Շվայգմանը, Փ. Ուիլիամսը, Թ. Գիլը, Պ. Լուկինը, Յ. Սինքլերը, Ք. Թոմուսչատը, Ա. Թանկրեդին, Ջ. Քլաբերսը, Ու. Լինդերֆալթը, Թ. Մուսգրեյվը, Ջ. Կրաուֆորդը, Մ. Շոն, Պ. Մալանշչուկը, Հ. Թիրլուեյ, Ռ. Դուրկին, Ջ. Ֆիտցմորիս, Ս. Ուսոցը, Ա. Մոխեսը, Մ. Կորովիտցը, Օ. Շաքտերը, Լ. Հաննիկայնեն, Ք. Գրեյը, Շ. Մրֆին, Ս. Դուգարդը, Ք. Ուրայթ, Է. Խիմենես դե Արեչագան, Բ. Բաքստերը, Գ. Աբի-Մաաբը, Վ. Քոչարյանի, Լ. Ալեքսիսեն, Ս. Թումանիսեն և այլք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՔ: Հետազոտման ընթացքում էական դեր են խաղացել նաև Միջազգային արդարադատության մշտական պալատի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատական ատյանների վճիռները, ինչպես նաև Միջազգային իրավունքի հանձնաժողովի հաշվետվությունները և ամենամյա պարբերականները:

Ատենախոսական աշխատանքի պատրաստման ընթացքում քննության են ենթարկվել նաև պետությունների պրակտիկայի և միջազգային կազմակերպությունների բանաձևերը և ներքին փաստաթղթերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Առաջադրված խնդիրների լուծման նպատակով ատենախոսական աշխատանքում օգտագործվել են իրավաբանական գիտության կողմից մշակված, ինչպես նաև պրակտիկայում փորձարկված գիտական ճանաչողության հնարքներ և մեթոդներ: Օգտագործվել են ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, դեդուկտիվ, ինդուկտիվ), ինչպես նաև մասնավոր գիտական (պատմաիրավական, տրամաբանաիրավական, համակարգակառուցվածքային, համեմատաիրավական, գործառույթային) ուսումնասիրության մեթոդները:

Լայնորեն կիրառվել է պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդից հատկապես առաջին գլխում ժողովուրդների ինքնորոշման աստիճանական զարգացումն ուսումնասիրելիս՝ քաղաքական գաղափարից մինչև իրավական սկզբունք: Համեմատաիրավական սկզբունքի միջոցով, համադրելով տարբեր միջազգային-իրավական ակտեր և մեկնաբանելով դրանք տրամաբանա-իրավական մեկնաբանման տարբեր կանոնների միջոցով, ցույց ենք տվել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի բազմաթիվ և տարատեսակ դրսևորումները կոնկրետ վարքագծի կանոնների տեսքով:

Համակարգակառուցվածքային սկզբունքի միջոցով երկրորդ գլխում իրականացվում է միջազգային իրավունքի տարբեր սկզբունքների համեմատական վերլուծություն, բացահայտվում են դրանց փոխկապվածությունն ու փոխադարձ ազդեցությունը:

Իրավական վերլուծությունը հնարավոր չէ առանց նորմատիվ-իրավական ակտերի, դրանց դրույթների ուսումնասիրության և մեկնաբանության (մեխանիկական-իրավաբանական վերլուծություն): Հեղինակի կողմից իրավունքը դիտարկվում է իր դինամիկ զարգացման ընթացքում (ինքնորոշման զարգացումը Ազգերի լիգայի համակարգից մինչև Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգ) և այդ իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների համատեքստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրականացվել է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի առանձին դրսևորումների իրացման համալիր վերլուծության փորձ՝ ըստ ինքնորոշման իրավունքին անդրադարձող բոլոր էական միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի, պետությունների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրակտիկայի, ինչպես նաև Միջազգային դատարանի վճիռների և խորհրդատվական եզրակացությունների համակարգային և համեմատական վերլուծության:

Հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի փոխկապակցվածությանը, ինչպես նաև այդ իրավունքի դատական պաշտպանելիության հարցերին: Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ անդրադարձ է կատարվում ինքնորոշման իրավունքի՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանում և արտադատական միջոցներով իրացման հիմնահարցին և այդ իրացմանը նպաստելու հիմնախնդիրներին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:

Թեմայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևակերպել և պաշտպանության ներկայացվել հետևյալ հիմնական դրույթները և եզրահանգումները.

1. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի արտաքին կողմը, որը ժողովրդին հնարավորություն է տալիս իրացնել իր իրավունքը անկախ պետակա-

նություն ստեղծելու միջոցով, սահմանափակված չէ միայն ապագադուրացման շրջանակներով և շարունակում է գործնական իրավական նշանակություն ունենալ նաև արդի պայմաններում: Ինքնորոշման իրավունքի այս դրսևորումն ուղղակիորեն կախված է ինքնորոշման իրավունքի ներքին կողմի ոտնահարումներից և վերջինիս արդյունավետության ապահովման երաշխիք է,

2. Միջազգային իրավունքի, մասնավորապես՝ ժողովուրդների ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև հակասությունների վերաբերյալ տեսակետները գուրկ են իրավաբանական հիմնավորվածությունից. դրանք իրենցից ներկայացնում են մեկ միասնական համակարգ, որի առանձին տարրերը փողկապակցված են և նպաստում են միմյանց արդյունավետ կենսագործմանը,

3. Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի պաշպանությունը համապատասխան պայմաններում տարածվում է նաև իրենց ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների վրա: Այն ենթադրում է ինքնորոշման իրավունքը կրող սուբյեկտների պաշտպանությունը նախկին մայր պետության տարածքային հավակնություններից և զինված ուժի միջոցով այդ սուբյեկտների միասնությունը տրոհելու փորձերից,

4. Թեև ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է պետությունների անմիջական ռազմական միջամտությունը ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների ազատագրական պայքարին (սակայն չի արգելում այլ տեսակի օժանդակություն), այնուամենայնիվ ժողովուրդի ինքնորոշումը կամ ազատագրական շարժումը, զինված ուժով կանխելու մայր պետության փորձերի դեպքում, կաշկանդված չէ միջազգային հարաբերություններում ուժի գործադրման արգելքով և հետևաբար կարող է դիմել զինված պայքարի իր ինքնորոշման իրավունքի իրագործման նպատակով: Նման պայքարը, իհարկե, կարող է դատապարտվել մայր պետության ներպետական իրավական համակարգի շրջանակներում, սակայն այդ պայքարը հաջողությամբ պսակվելու դեպքում միջազգային իրավունքի տեսանկյունից մնում է իրավաբանորեն չեզոք գործողություն,

5. Ինքնորոշման իրավունքի իմպերատիվ՝ *jus cogens*, բնույթը, ինչպես նաև այդ իրավունքից բխող պարտավորությունների *erga omnes* բնույթը պայմանավորում են ոչ միայն ողջ միջազգային հանրության և նրա առանձին անդամների իրավական շահը՝ պաշտպանելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը, այլ նաև միջազգային հանրության պարտավորությունը՝ ակտիվ գործողությունների (ինչպես նաև գործողություններից ձեռնպահ մնալու) միջոցով օժանդակելու ինքնորոշման իրավունքի իրացմանը,

6. Թեև ժողովուրդներն օժտված չեն իրենց ինքնորոշման իրավունքի պաշտպանության նպատակով Միջազգային դատարանի առջև հանդես գալու հնարավորությամբ, ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթն ընձեռում է երրորդ պետություններին Միջազգային դատարանում հայց հարուցելու իրավասություն՝ որպես *actio popularis* (ողջ միջազգային հանրության շահը պաշտպանելուն ուղղված գործողություն),

7. Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերը (հակառակ ադրբեջանական կողմի պնդումների) ուղղված չեն ԼՂՀ անկախ պետականության ստեղծման դատապարտմանը: 822, 853, 874, 884 բանաձևերի համեմատական վերլուծությունը, դրանց նախապատրաստական աշխատանքների և հարակից հանգամանքների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Անվտանգության խորհուրդն ըստ էության ճանաչել է ԼՂՀ ինքնուրույն իրավասությունները. ակնհայտ է նաև վերոնշյալ բանաձևերի տարբերությունն այն բանաձևերից, որոնցով Անվտանգության խորհուրդը կոչ է արել միջազգային հանրությանը չճանաչել նորաստեղծ սուբյեկտները (ինչպիսիք են Ռեպուբլիկա Սրապկան, Հարավային Ռոդեզիան, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսական հետազոտության արդյունքում ձևավորված եզրակացությունները կարելի է օգտագործել գիտական այլ աշխատանքներում, որոնք կվերաբերեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքին և միջազգային իրավունքի սկզբունքներին ու համակարգին առհասարակ: Ատենախոսությունում ստեղծված որոշ եզրահանգումներ ու տեսակետներ կարող են տեղ գտնել ինչպես ԵՊՀ, այնպես էլ այլ բուհերի իրավաբանական ֆակուլտետների միջազգային իրավունք առարկայի ուսումնական ծրագրերում:

Ատենախոսության պրակտիկ առաջարկները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության՝ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև միջազգային-իրավական հիմնահարցերի կարգավորմամբ զբաղվող պետական հիմնարկների և գործակալությունների, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսական աշխատանքը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որտեղ ներկայացվել և հաստատվել են ատենախոսությունում առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Եզրահանգումներն ու դրույթները քննարկվել և հիմնավորվել են գիտաժողովներում և սեմինարներում ներկայացված զեկուցումներում ու թեզիսներում: Ատենախոսության հիմնական եզրակացությունները, վերլուծություններն ու դրույթները արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը կառուցված է ըստ հետազոտության հիմնական նպատակի. ներկայացվել են դրա լուծման համար անհրաժեշտ խնդիրները և հետազոտության առարկան: Աշխատանքը կազմված է ներածությունից, յոթ պարագրաֆ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

II. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը, որոշակիացվում են վերջինիս մեթո-

դաքանական ու տեսական հիմունքները և նրա նպատակներն և խնդիրները, ձևակերպվում են պաշտպանության ներկայացված հիմնաան դրույթները: Ներածությունում հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական կարևորությունը: Ներածությունը տեղեկություններ է պարունակում նաև հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Առաջին գլուխը՝ «Ինքնորոշման իրավունքի պատմական զարգացումը՝ քաղաքական սկզբունքից մինչև իրավունքի սկզբունք և վարքագծի կանոն», կազմված է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը՝ «Ինքնորոշումը նախքան Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը», անդրադառնում է ինքնորոշման հասկացության զարգացմանը նախքան 20-րդ դարի երկրորդ կեսը: Ծնունդ առնելով 1776 թ. Ամերիկայի անկախության հռչակագրից և 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունից՝ այս հասկացությունը ի սկզբանե ենթադրում էր միապետի պատասխանատվությունը ժողովրդի նկատմամբ և ժողովրդի՝ այս կամ այն միապետի կամ պետության իշխանությանը ենթարկվելու վերաբերյալ իր կամքն արտահայտելու իրավունքը:

Իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի պատմական զարգացման հաջորդ փուլը կապված է Վ. Ի. Լենինի և Վ. Ուիլսոնի անունների հետ: Սակայն ո՛չ Լենինյան, ո՛չ էլ Ուիլսոնյան ինքնորոշմանը վիճակված չէր դառնալու Ազգերի լիգայի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս:

Փոխարենը Ազգերի լիգայի շրջանակներում սկսեցին զարգանալ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի լիգայի շրջանակներում ստեղծվեց ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջկառավարական համակարգ, որն իրենից ներկայացնում էր մի շարք երկկողմ և բազմակողմ պայմանագրերով ամրագրված՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության պարտավորությունների ամբողջություն:

Ազգերի լիգայի ազգային փոքրամասնությունների համակարգը, սակայն, չէր ստեղծում պարտավորություններ բոլոր պետությունների համար: Այսպես կոչված «Փոքրամասնությունների պայմանագրերը» (“minority treaties”) պարտավորություններ էին ստեղծում պարտված Ավստրիայի, Հունգարիայի, Բուլղարիայի համար, սակայն ոչ Գերմանիայի: Նման պայմանագրեր պարտադրվել էին նաև պատերազմում «հաղթած» եվրոպական փոքր տերություններին, ինչպիսիք էին Լեհաստանը, Չեխոսլովակիան, բայց ոչ, օրինակ, Իտալիայի համար: Ուստի XX դ. սկզբում այդ խմբերի իրավունքների պաշտպանության սովորութային նորմերի գոյության մասին խոսելն անհնարին է:

Ազգերի լիգայի համակարգում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ստեղծման և զարգացման համար հաջորդ նախադրյալը մանդատի համակարգն էր: Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր այն գաղութների ու տարածքների նկատմամբ, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով դուրս են եկել նախկին սուլերենների իշխանությունից, որոնք դեռևս ունակ չեն ինքնուրույն գոյատևման, պետք է գործադրվի այն սկզբունք-

քը, որի համաձայն՝ «այդ ժողովուրդների բարեկեցությունն ու զարգացումը հանդիսանում են քաղաքակրթության սրբազան պարտավորությունը»: Այս նպատակով, Կանոնադրության համաձայն այդ ժողովուրդների նկատմամբ պետք է հաստատվեր «զարգացած ազգերի» խնամակալություն: Ի տարբերություն «փոքրամասնությունների պայմանագրերի»՝ Ազգերի լիգայի 22-րդ հոդվածն արդեն ակնհայտորեն խոսում էր իրավական սկզբունքի մասին, որը վերաբերում էր Լիգային անդամակցող բոլոր պետություններին: Միջազգային դատարանի կողմից առաջ քաշած մեկնաբանության համաձայն՝ «Մանդատը ստեղծվել է ի շահ [կոնկրետ] տարածաշրջան[ներ]ի բնակչության և ի շահ մարդկությանն ընդհանրապես՝ որպես միջազգային ինստիտուտ, որն ունի միջազգային նպատակ՝ [ապահովել] քաղաքակրթության սրբազան պարտավորությունը»: Ավելին, ըստ Միջազգային դատարանի՝ այդ «սրբազան պարտավորության» առաջնային նպատակը հենց ինքնորոշումն էր և համապատասխան ժողովուրդների անկախությունը: Ուստի, ըստ Դատարանի, Մանդատային համակարգը հենց ծառայել է որպես հետագայում ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծվելիք ինքնորոշման իրավական ռեժիմի նախահայր:

Երկրորդ պարագրաֆը՝ «Ինքնորոշման իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից հետո և դրա բովանդակությունը համաձայն միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի հռչակագրերի, միջազգային դատարանի վճիռների», անդրադառնում է ինքնորոշման կայացմանը՝ որպես իրավական սկզբունք, և վերջինիս բովանդակության բացահայտմանը:

Առաջին ունիվերսալ միջազգային պայմանագիրը, որը պարունակում է դրույթ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ, ՄԱԿ-ի կանոնադրությունն է (1-ին հոդված): Վերջինիս վերաբերյալ իրավունքի գիտությունում ծավալվել են բազմաթիվ բանավեճեր: Մի շարք հեղինակների կարծիքով, ՄԱԿ-ի կանոնադրությունում ինքնորոշման իրավունք հասկացությունը օգտագործվում է որպես հոմանիշ պետությունների ինքնիշխան հավասարությանը, մյուսների կարծիքով՝ ժողովրդավարության ինստիտուտին: Սակայն երկու մոտեցումներն էլ ըստ էության ճիշտ են և չեն հակասում միմյանց: Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Կանոնադրության դրույթները բազմաբովանդակ են և չեն կարող սահմանափակվել միայն մեկ մեկնաբանությամբ: Այսպես, «ժողովուրդ» եզրույթը օգտագործվում է նաև Կանոնադրության XI գլխում ոչ ինքնակառավարվող տարածքների բնակչության իմաստով: Հետևաբար տրամաբանական է նաև այն մոտեցումը, որի համաձայն «ժողովուրդը» կամ պետության բնակչությունն է (դրանից բխող համապատասխան իրավունքներով), կամ էլ ոչ ինքնակառավարվող տարածքների բնակչությունը, որն ունի անկախ պետականության կայացման իրավունք: ՄԱԿ-ի կանոնադրության առաջին հոդվածն ըստ էության սահմանում է միջազգային հանրության բարեկեցիկ և համերաշխ գոյատևման միասնական արժեքաբանություն՝ ցույց տալով խաղաղության, անվտանգության, ինքնորոշման և մարդու իրավունքների փոխադարձ կապվածությունը:

Ինքնորոշման իրավունքի հետագա զարգացումը տեղի ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի միջոցով, որոնք հաղորդեցին քննարկվող

ինստիտուտին նոր նշանակություն և բովանդակություն: Առաջին նման բանաձևը 1960 թ. դեկտեմբերի 4-ի *Գաղութացված պետությունների և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագիրն* էր (այսուհետ՝ *Գաղութային հռչակագիր*), որը սահմանում էր անկախ պետականության ստեղծումը՝ որպես ինքնորոշման իրավունքի վերջնական նպատակ՝ Կանոնադրությունում ամրագրված սկզբունքը վերաձելով կոնկրետ պոզիտիվ իրավունքի: Այն արտաքին ինքնորոշման առաջին պոզիտիվ իրավական ամրագրումն է:

Ինքնորոշման իրավունքի բովանդակության հետագա հստակեցման հարցում մեծ դեր խաղաց 1970 թ. հոկտեմբերի 24-ի՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված *ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* (այսուհետև՝ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր*): Այն մանրամասնորեն շարադրում է ինքնորոշման իրավունքի բովանդակությունը, սահմանում պետությունների պարտականություն՝ չխոչընդոտել ինքնորոշման իրավունքի իրացմանը և նպաստել վերջինիս պաշտպանությանը, նկարագրում դրա իրացման ձևերը և այլն:

Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի առավել վիճահարույց հատվածն այսպես կոչված «երաշխավորության դրույթն» է, որը դարձել է բազմաթիվ գիտական վեճերի առարկա: Վերջինս սահմանում է. «Վերոշարադրյալ պարագրաֆներում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես թույլտվություն կամ խրախուսում որևիցե գործողության, որը կտրոհի կամ ամբողջովին կամ մասամբ կվնասի այն ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը, որոնք գործում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա ...»:

Մեր կարծիքով, «երաշխավորության դրույթի» *a contrario* մեկնաբանումը վկայում է այն մասին, որ վերջինս տրոհումից և քայքայումից պաշտպանում է միայն այն ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնք հարգում են ժողովուրդների ինքնորոշմանը իրավունքը: Նույն եզրակացության ենք հանգում նաև *Հռչակագրի* համակարգային մեկնաբանության արդյունքում: Այսպես, եթե «երաշխավորության դրույթը» կիրառվեր բոլոր պետությունների նկատմամբ՝ ապահովելով վերջիններիս տարածքային ամբողջականության պահպանումն անկախ վերջիններիս՝ ազգային փոքրամասնությունների և առանձին տարածքների բնակչության նկատմամբ ունեցած վերաբերմունքի, ապա ինքնորոշման իրավունքի վերաբերյալ նախորդ դրույթները լիովին կիմաստազրկվեին, քանի որ դա կնշանակեր, որ արտաքին ինքնորոշման իրավունքի իրականացումը կլիներ պարզապես անհնարին:

Համեմատելով *Գաղութային հռչակագրի* և *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* դրույթները՝ ապացուցվում է, որ վերջիններումն օգտագործվող «պետություն» և «երկիր» հասկացությունները ունեն տարբեր բովանդակություն, և որ երկու փաստաթղթերի ներդաշնակ ընթերցում հնարավոր է միայն, եթե «երկիր» եզրույթն օգտագործվի որպես հումանիշ ոչ ինքնակառավարվող տարածքների: Արդյունքում *Գաղութային հռչակագիրը* չի պաշտպանում մայր պետություն-

ների տարածքային ամբողջականությունը, այլ պահանջում է, որ մայր պետությունները, անկախություն պարգևելով գաղութացված ժողովուրդներին, չոտնձգեն վերջիններիս տարածքային ամբողջականության դեմ:

Պոզիտիվ ինքնորոշման իրավունքի զարգացման գործում հսկայական դեր խաղացին նաև 1966 թ. ՄԱԿ-ի շրջանակներում մշակված *Քաղաքացիական և քաղական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը* (այսուհետ նաև՝ ՔՔԻՄԴ) և *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը*: Վերջիններիս նույնական բովանդակությունը ունեցող 1-ին հոդվածը մանրամասն անդրադառնում է ինքնորոշման իրավունքի մի քանի դրսևորումների՝ ներքին ինքնորոշման իրավունքին, ժողովուրդների սեփական ռեսուրսների նկատմամբ իրավունքներին, ինչպես նաև կախյալ ժողովուրդների իրավունքներին:

Երկրորդ գլուխը («Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի սկզբունքների համակարգում») բաղկացած է երեք պարագրաֆից, որոնցից առաջինում՝ **«Միջազգային իրավունքի սկզբունքների հասկացությունն ու դրանց համակարգային փոխկապվածությունը»**, հիմնավորվում է իրավունքի սկզբունքների միջև հակասությունների վերաբերյալ տեսությունների սխալականությունը:

Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները միջազգային իրավակարգն առավել խտացրած կերպով արտացոլող հիմնարար չափորոշիչներ են, որոնք ցույց են տալիս միջազգային հարաբերությունների կարգավորման ուղղությունները և լրացնում իրավական բացերն այն դեպքերում, երբ կոնկրետ հասարակական հարաբերությունները կարգավորող սովորութային կամ պայմանագրային նորմերը բացակայում են: Ըստ Յ. Բրաունլիի՝ դրանք վերացարկված կերպով արտացոլում են պետությունների՝ տասնամյակների (իսկ մի շարք սկզբունքների դեպքում՝ դարերի) ընթացքում ձևավորված պրակտիկան: Սակայն բխելով պրակտիկայից՝ դրանք միջազգային իրավակարգի համար ունեն այնքան հիմնարար նշանակություն, որ այժմ կարող են գոյություն ունենալ պրակտիկայից անկախ:

Ամերիկյան իրավագետ Ռ. Դուրկինի համաձայն՝ իրավական սկզբունքների և վարքագծի կանոնների (այսուհետ՝ «կանոն») միջև տարբերությունը դրանց գործողության տրամաբանության մեջ է: Կանոնները գործում են «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքի համաձայն. եթե նորմի կողմից սահմանված փաստական հանգամանքներն առկա են, ապա այն տալիս է հասարակական հարաբերությունների լուծումը, իսկ եթե ոչ, ապա նորմը պարզապես չի ստանում ոչ մի կիրառություն:

Սկզբունքները, սակայն այդ կերպ չեն գործում: Դրանք չեն ամրագրում իրավական հետևանքներ, որոնք պետք է անպայման և մեխանիկորեն վրա հասնեն, եթե առկա են դրանց իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները: Փոխարենը սկզբունքները հասարակական հարաբերությունների կարգավորումը տանում են որևիցե կոնկրետ ուղղությամբ, ցույց տալիս դրանց կարգավորման վեկտորը, սակայն ոչ բացարձակ կերպով, և շարունակում են իրենց գոյությունը

հասարակական հարաբերություններում, անգամ երբ չեն կիրառվում: Հետևաբար սկզբունքները չեն առաջարկում կոնկրետ լուծում, այլ միայն տրամադրում են արքիեպիսկոպիական հիմք յուրաքանչյուր կոնկրետ հասարակական հարաբերության կարգավորման համար:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝ «**Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման և միջազգային հարաբերություններում ուժ և ուժի սպառնալիք չգործադրելու սկզբունքների հարաբերակցությունը**», անդրադառնում է միջազգային իրավունքի այդ երկու հիմնարար սկզբունքների փոխներգործության հարթություններին:

Հարթություններից առաջինը ուժի և ցանկացած հարկադիր միջոցի գործադրման արգելքն է մայր պետության կողմից գաղութացված, օկուպացված ժողովուրդների և ինքնորոշման իրավունքի մյուս սուբյեկտների դեմ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ այս արգելքը չի տարածվում ժողովուրդ չհանդիսացող սուբյեկտների կողմից անջատողական շարժումների դեմ ուժ գործադրելու վրա: Անջատողական շարժումները չեն ենթարկվում միջազգային-իրավական կարգավորման, և հետևաբար մինչև նման շարժման կայացումը որպես կայուն պետականակերպ կազմավորում, որը կբավարարի պետության սովորութային չափանիշներին, վերջինիս և մայր պետության հարաբերությունները կարգավորվում են մայր պետության իրավական համակարգի շրջանակներում, որը և ազատ է գործադրելու ուժ իրավապահ նկատառումներով՝ պաշտպանելով սեփական պետականությունը իր տեսանկյունից հանցավոր հանդիսացող ոտնձգություններին:

Ինչ վերաբերում է գաղութացված ազգերի և ինքնորոշման իրավունքի այլ սուբյեկտների կողմից մայր պետության դեմ ուժ գործադրելու հնարավորությանը, ապա այս ոլորտի վերաբերյալ դրույթներ հնարավոր չէ գտնել ՄԱԿ-ի հռչակագրերում կամ որևէ այլ միջազգային փաստաթղթում:

Սակայն ՄԱԿ-ի Միջազգային դատարանի «*Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների վերաբերյալ*» խորհրդատվական եզրակացության և «*Միջազգային իրավունքի նորմերին Կոստովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության*» խորհրդատվական եզրակացության տրամաբանության համեմատության հիման վրա կարելի ասել, որ ուժի գործադրման արգելքի սկզբունքը, ինչպես և տարածքային ամբողջականության սկզբունքը, որի հետ այն սերտորեն փոխկապված է, գործում է միայն միջպետական հարթությունում, և հետևաբար չեն կաշկանդում ոչ պետական կազմավորումներին:

Ինչ վերաբերում է ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին օժանդակություն տրամադրելու հնարավորությանը, ապա հատկանշական է, որ Միջազգային դատարանը մեկ այլ հիմնարար նորմի՝ ցեղասպանության արգելքի կապակցությամբ նշել է «*Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման*» վերաբերյալ գործում, որ բոլոր պետություններն ունեն անմիջական պարտականություն կանխելու այդ հանցագործության իրականացումը: Ընդ որում, ըստ Միջազգային դատարանի այդ պար-

տավորության ծավալը և բովանդակությունը ենթակա է փոփոխության՝ պայմանավորված պետության աշխարհագրական դիրքով, հանցագործության զոհերի հետ ունեցած կապով, այն պետության հետ հարաբերություններով, որի տարածքում և տեղի են ունենում հանցավոր գործողությունները: Այս նույն վերլուծությունը հաջողությամբ կարելի է կիրառել նաև ինքնորոշման իրավունքի համատեքստում՝ հաշվի առնելով երկու նորմերի հավասարազոր բնույթը, և նշել, որ բոլոր պետությունները պարտավոր են ինքնորոշման համար պայքարող ժողովուրդներին տրամադրել օժանդակություն միջազգային իրավունքի թույլատրելիության շրջանակներում:

Երրորդ պարագրաֆի վերտառությունն է «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման և մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքների հարաբերակցությունը»: Մարդու իրավունքների ոլորտում պետությունները կրում են երկակի պարտավորություն՝ (1) պարտավորություն ողջ միջազգային հանրության առջև՝ պահպանելու մարդու իրավունքները սեփական տարածքում, (2) պարտավորություն սեփական բնակչության և վերջինիս առանձին անհատների առջև: Մարդու իրավունքների այս երկակի բովանդակությամբ էլ պայմանավորված՝ կարելի է առանձնացնել մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքի և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի միջև փոխներգործության երկու հարթություն. (1) նախ՝ ինքնորոշման համար պայքարող ժողովուրդը, որը հավակնում է պետականության ստեղծման և միջազգային ճանաչման, պարտավոր է ցույց տալ, որ ինքը գործում է սովորության մարդու իրավունքների և առաջին հերթին վերջինիս իմպերատիվ նորմերի պահանջներին համահունչ, (2) մյուս կողմից՝ սեփական բնակչության մի հատվածի իրավունքների լայնածավալ ոտնահարումը պետության կողմից կարող է հիմք հանդիսանալ բնակչության այդ հատվածի արտաքին ինքնորոշման իրավունքի իրականացման համար:

Այս դրույթներից առաջինն իր անմիջական ապացույցն է գտնում Անվտանգության խորհրդի պրակտիկայում: Այսպես, Հարավային Ռոդեզիայի և Ռեպուբլիկա Սրապակայի դեպքերում ԱԽ-ն հերքեց վերջիններիս անկախության հռչակագրերի օրինականությունը նախնառաջ մարդու իրավունքների լայնածավալ խախտումների պատճառով: Երկու դեպքում էլ միջազգային հանրությունը չճանաչեց այդ սուբյեկտները որպես անկախ պետություններ: Նույն մոտեցումը առկա է նաև Եվրոպական ընկերակցությունների ընդունած «Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միության տարածքում նոր պետությունների ճանաչման ուղեցուցում», որի համաձայն՝ ճանաչման ենթակա են միայն այն պետությունները, որոնք տաժում են հարգանք «օրենքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ»:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է վստահորեն խոսել սովորության նորմի գոյության մասին, որն արգելում է այն սուբյեկտների պետականության ճանաչումը, որոնք ակտիվորեն ներգրավված են ռասայական խտրականության, ցեղասպանության, էթնիկ զտումների և միջազգային իրավունքի այլ իմպերատիվ նորմերի ոտնահարումների մեջ (գերազանցապես մարդու իրավունքների միջազ-

գային իրավունքից բխող): Այս կանոնի տրամաբանությունը շատ հասկանալի է միջազգային հանրությունը չի ցանկանում համալրել սեփական շարքերը մի սուբյեկտով, որն արդեն իսկ իրավախախտ է և վտանգում է միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

Իսկ ի՞նչ, եթե արդեն իսկ ճանաչված և կայացած պետությունը չի հարգում իր ինքնիշխանության ներքո գտնվող ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները կամ ներգրավվում է ցեղասպանության կամ այլ ծանր իրավախախտումների մեջ: Այստեղ արդեն դրսևորվում է ինքնորոշման և մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքների հարաբերակցության երկրորդ ձևը, որը կարելի է բնորոշել հետևյալ բանաձևով. «երբ մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքն անտեսվում է մի խմբի նկատմամբ, որն օժտված է ներքին ինքնորոշման իրավունքով, այդ խումբը ձեռք է բերում արտաքին ինքնորոշման հնարավորություն»: Այս տեսությունը ժամանակակից իրավաբանական գրականությունում հայտնի է «անջատում՝ որպես իրավական պաշտպանության միջոց» վերտառությամբ:

Այս կապը բխում է նաև միջազգային փաստաթղթերի վերլուծությունից: Այսպես, ըստ *Գաղութային պետություններին և ժողովուրդներին անկախություն պարգևելու վերաբերյալ հռչակագրի*՝ «ժողովուրդների հնազանդեցումն օտարերկրյա հպատակեցմանը, ճնշմանը կամ չարաշահմանը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքների ոտնահարում», իսկ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* «երաշխավորության դրույթը», ինչպես արդեն տեսանք, ազատում է երրորդ պետություններին ժողովուրդների ինքնորոշման իրավունքը խախտող պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու պարտականությունից:

Երրորդ գլուխը՝ «Ինքնորոշման իրավունքի իրացման ապահովումը միջազգային իրավունքում», բաղկացած է երկու պարագրաֆից:

«Ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանում և այլ միջազգային դատական ատյաններում» վերտառությամբ առաջին պարագրաֆը անդրադառնում է վերջինիս իրացմանը դատական պաշտպանության միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանությամբ լիազորված դատական ատյաններից միայն Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովն ունի հստակ հնարավորություն քննելու ինքնորոշման իրավունքի հետ կապված հարցերը. ոչ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, ոչ մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կամ ամերիկյան համակարգերը նման հնարավորություն չունեն:

Փոխարենը Աֆրիկյան հանձնաժողովը ոչ միայն իրեն վերապահում է այս կամ այն մարդկանց խումբը ժողովուրդ որակելու իրավասություն (թեև առանց սահմանելու այն չափորոշիչները, որով նա դա անում է), այլ նաև ի պատասխան ներքին ինքնորոշման իրավունքի, որդեգրել է ապագադրությամբ համատեքստից դուրս, անջատման իրավունքը ճանաչելու մոտեցում: Թեև պրակտիկայում այն դեռևս չի ճանաչել ոչ մի կոնկրետ սուբյեկտի անջատման իրավասությունը, և դժ-

վար է ասել, թե ունի արդյոք Հանձնաժողովը բավարար քաղաքական ներուժ նման քայլի դիմելու համար:

Ինքնորոշման իրավունքի հետ կապված հարցերի քննարկման մեկ այլ ամբիոն կարող է հանդիսանալ ՄԱԿ Միջազգային դատարանը, որտեղ ինքնորոշման իրավունքի պաշտպանության տեսական (դեռևս պրակտիկայում երբեք չկիրառված) հնարավորությունը կարող է պայմանավորված լինել այդ իրավունքի՝ միջազգային իրավունքի համակարգում ունեցած դերով՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում այդ նորմի հիմնարար իրավական նշանակությունը: Այսպես, Միջազգային դատարանն «Արևելյան Թիմորի» վերաբերյալ գործում արտահայտեց այն կարծիքը, որ ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթն անվիճելի է: Քանի որ *erga omnes* պարտավորությունների ապահովման հարցում շահագրգռվածությունը ոչ միայն տուժած սուբյեկտի, այլև ողջ միջազգային հանրությանն է ինքնորոշման իրավունքի ոտնահարման պարագայում նույնպես շահագրգիռ կողմերի ցանկը չի սահմանափակվում տուժող ժողովրդով և ներառում է պետությունների ողջ միջազգային հանրությունը:

Ինչպես արդեն նշվել է, «Բարսելոնա Թրեքշն» գործում Միջազգային դատարանն ընդգծեց այն տարբերությունը, որը առկա է *erga omnes* և *vis-à-vis* պարտավորությունների միջև՝ շեշտելով, որ բոլոր պետություններն ունեն իրավական շահ առաջինների պաշտպանության հարցում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը երրորդ պետությունների հայցի հիմքով լիովին տրամաբանական է և հիմնավորված: Հետևաբար՝ ինքնորոշման իրավունքի իրացման անհնարինության վերաբերյալ մի շարք հեղինակների դատողությունները զուրկ են իրավական պատշաճ հիմնավորվածությունից:

Երկրորդ պարագրաֆը («Ինքնորոշման իրավունքի արտադատական պաշտպանությունը՝ նյութական և ռազմական օժանդակությունը») նվիրված է պետությունների կոլեկտիվ և անհատական արտադատական գործողություններին՝ ուղղված ինքնորոշման իրավունքի իրացմանը:

Ինքնորոշման ոլորտում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գերազանցապես միջամտում է մայր պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու և ոչ թե անջատողական շարժմանը օժանդակելու նպատակով: Այս հանգամանքը պատճառ է դարձել, որ մի շարք հեղինակներ պնդեն, թե ՄԱԿ-ի քաղաքականությունն ապագա դարձած համատեքստից դուրս առաջին հերթին ուղղված է պետությունների տարածքային ամբողջականության պաշտպանությանը և ոչ ինքնորոշման իրավունքի ապահովմանը:

Երկրորդ պարագրաֆում հերքվում է այս տեսությունը այն հիմքով, որ անտեսվում է այն էական տարբերությունն իրավիճակների միջև, որոնք պայմանավորված են եղել օտարերկրյա պետությունների միջամտությամբ, և իրավիճակների, որոնցում անջատողական շարժումը պայքարում է իր անկախության համար առանց օտարերկրյա միջամտության:

Առաջին դրվագը, որում ՄԱԿ-ը միջամտել է անջատողական շարժման և մայր պետության միջև տեղի ունեցող ընդհարմանը, եղել է Կատանգայի և Կոնգոյի միջև պայքարը: Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո՝ 1960 թ., Կատանգան հռչակեց իր անկախությունը Կոնգոյից՝ մտնելով վերջինիս հետ երկարատև զինված ընդհարման մեջ, որի ընդհարումի առաջին իսկ պահից մինչև Կատանգայի անջատողական շարժման ոչնչացումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ամբողջովին պաշտպանել է Կոնգոյին և վերջինիս տարածքային ամբողջականությունը: Սակայն կարևորն այստեղ այն հանգամանքն է, որ Կատանգայի անջատողական շարժումը ֆինանսավորում էր Բելգիան, և վերջինիս զինված ջոկատները կողք կողքի պայքարում էին Կոնգոյի ուժերի դեմ:

Հետևաբար՝ ՄԱԿ-ի միջամտությունը Կոնգո իրականում կարելի է որակել որպես զինված միջամտություն՝ ի իրականացումն *Գաղութային հռչակագրի* պահանջների, քանի որ վերջինս սահմանում է պարտավորություն բոլոր պետությունների համար՝ հարգել «բոլոր ժողովուրդների ինքնիշխան իրավունքները և նրանց տարածքային ամբողջականությունը»:

Նույնը կարելի է ասել նաև անջատողական շարժումների դատապարտման այլ դեպքերի մասին՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ստեղծվել է Թուրքիայի միջամտության շնորհիվ), Ռեպուբլիկա Սրայսկայի (ստեղծվել էր Սերբիայի միջամտության շնորհիվ) և այլն, որոնք քննադատվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր ասամբլեայի կողմից. դրանք բոլորը կայացել են օտարերկրյա ֆինանսական և ռազմական օժանդակության միջոցով՝ իրականում արտահայտելով ոչ թե տեղի բնակչության կամքը, այլ միջամտող օտարերկրյա պետության:

Սակայն այն դեպքերում, երբ առկա չէ օտարերկրյա միջամտություն, Անվտանգության խորհուրդը մայր պետությանը ռազմական օժանդակություն չի տրամադրում և կոչ չի անում միջազգային հանրությանը չհամագործակցել նորաստեղծ սուբյեկտի հետ: Վառ օրինակ է բանաձև 713-ը, որը ընդունվեց Հարավսլավիայի տրոհման համատեքստում և չսատարեց վերջինիս տարածքային ամբողջականությանը, այլ միայն կոչ արեց ձեռնպահ մնալ ցանկացած գործողություններից, որոնք կարող էին բացասական հետևանքներ ունենալ տարածաշրջանում անվտանգության ու խաղաղության վրա և սահմանեց Հարավսլավիայի ռազմական էմբարգո (շրջափակում):

Այսպիսով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրավասու է միջամտելու ինքնորոշման իրավունքի իրականացման դեպքերին: Ավելին՝ հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը՝ կարելի է ասել, որ Անվտանգության խորհուրդը պարտավոր է միջամտել:

Հակառակ ադրբեջանական կողմի պարբերական հայտարարություններին, թե Անվտանգության խորհուրդը ճանաչել է Հայաստանի Հանրապետությանը որպես օկուպացիոն ուժ՝ ԱԽ բանաձևերն (բանաձևեր 822, 853, 874, 884) իրականում ունեն Հայաստանի և ԼՂՀ-ի համար բարենպաստ դիրքորոշում, քանի որ ըստ էության չեն ճանաչում ԼՂՀ-ն որպես Հայաստանի կամքով և միջոցներով գործող

սուբյեկտ, որի գործողությունները վերագրելի են Հայաստանին, ինչն, փաստորեն, ipso facto անօրինական կդարձնեք ԼՂՀ ստեղծումը:

Այսպես՝ Անվտանգության խորհրդի բանաձևերից առաջինը՝ 822-ը, խոսում է «տեղական հայկական ուժերի կողմից Քելբաջարի շրջանի նվաճման» մասին: Հայաստանի Հանրապետության և տեղական հայկական ուժերի միջև տարբերությունն ընդգծված է նաև *Անվտանգության խորհրդի նախագահի հուշագրում*, որին վերոնշյալ բանաձևը հղում է անում իր պրեամբուլայում, որ հաջորդեց բանաձևի ընդունմանը, ՄԱԿ-ում Ֆրանսիայի ներկայացուցչի եզրափակիչ ճառում նույնպես վերահաստատվում է այս տարբերակումը:

Բանաձև 853-ը կոչ արեց Հայաստանի Հանրապետությանը «շարունակել գործադրել իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ՝ բանաձև 822-ի և սույն բանաձևի պահանջներն ի կատար ածելու համար և հասնելու այդ կողմի ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկների ընդունմանը»: Սույն ձևակերպումը կարելի է մեկնաբանել միայն հետևյալ կերպ՝ (1) Լեռնային Ղարաբաղը իրավահարաբերությունների «կողմ» է, այսինքն՝ օժտված է ինքնուրույն իրավասուբյեկտությամբ, (2) Հայաստանն ունի ազդեցություն ԼՂՀ նկատմամբ (սակայն ԼՂՀ-ն նույնական չէ Հայաստանի հետ), (3) Հայաստանը փորձել է գործադրել իր ազդեցությունը անցյալում ԵԱՀԿ սկզբունքները ԼՂՀ-ին պարտադրելու համար (քանի որ ԱԽ-ն կոչ էր անում «շարունակել գործադրել իր ազդեցությունը») (4), Հայաստանը արդյունքի չի հասել (ինչն ավելի է ընդգծում երկու սուբյեկտների միասնական կամքով չառաջնորդվելու հանգամանքը): Նույն շարադրանքն են օգտագործում նաև ԵԱՀԿ և այլ միջազգային կազմակերպությունների փաստաթղթերը:

Այս ամենը ընդհանրացնելով՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը. վերոնշյալ բանաձևերից և փաստաթղթերից ոչ մեկը չի խոսում ԼՂՀ անկախության հռչակագրի անիրավաչափության մասին, կոչ չի անում միջազգային հանրությանը չճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ավելին՝ այդ բանաձևերն ընդունում են Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ («տեղական հայկական ուժեր») միմյանցից տարբերվող իրավասուբյեկտությունը: Բանաձևերում օգտագործվող «օկուպացիա» եզրույթը վերաբերում է միայն ԼՂՀ հարակից տարածքներին, և որպես «օկուպացնող» սուբյեկտ հիշատակում են տեղական հայկական ուժերը. ոչ մի բանաձև Հայաստանը չի հիշատակում որպես օկուպացիոն ուժ:

Միջազգային հանրության կողմից ինքնորոշման իրավունքի իրացումն ապահովելու այլ եղանակ է պետությունների միակողմանի գործողությունը: Ինքնորոշման իրավունքի ոլորտում երրորդ պետությունների կողմից միակողմ գործողությունները, սակայն, պետք է կրեն սահմանափակ բնույթ:

Հատկանշական է, որ եթե անջատողական շարժումն իրականում չհանդիսանա ինքնորոշման սուբյեկտ, երրորդ պետության կողմից յուրաքանչյուր օժանդակություն կորակվի որպես մայր պետության ներքին գործերին միջամտություն և միջազգային իրավունքի խախտում (նույնը վերաբերում է նաև անջատողական սուբյեկտի ճանաչմանը): Սա տրամաբանական է, քանի որ եթե անջատողական շարժումը չի հանդիսանում ինքնորոշման սուբյեկտ՝ ժողովուրդ, ապա վերջինիս

անջատումը առաջ է բերում միջազգային-իրավական հետևանքներ միայն փաստի ուժով, այն պահից, երբ այն փաստացի ապահովում է իր անկախությունը մայր պետությունից՝ դառնալով *fait accompli*: Նախքան այդ պահը ցանկացած միջամտություն՝ լինի այն զինված օգնություն, նյութական օժանդակություն, թե անջատված սուբյեկտի պետականության ճանաչում, մայր պետության ներքին գործերին միջամտություն է և վերջինիս իրավունքների ոտնահարում:

Իրավիճակը լիովին այլ է, երբ անջատման դիմած սուբյեկտը հանդիսանում է ինքնորոշման իրավունքի կրողն է՝ ժողովուրդը: Այս պարագայում, ինչպես արդեն նշվեց, անջատման և նոր պետականության ստեղծման հիմնահարցը կարգավորվում է միջազգային իրավունքի կողմից և մայր պետության ներքին գործը չէ: Այդ մասին է վկայում նաև պետական պրակտիկան: Այսպես, Ալժիրի պետականությունը ճանաչվել էր շուրջ երեսուն պետությունների կողմից նախքան մայր պետության՝ Ֆրանսիայի 1962 թ. հուլիսի 3-ի ճանաչումը:

Մակայն անգամ այս պարագայում օժանդակությունը երրորդ պետությունների կողմից պետք է կրի սահմանափակ բնույթ: Այսպես, ժողովրդի գործողությունների անմիջական վերահսկողությունը երրորդ պետության կողմից կարող է այդ ժողովուրդը վերածել «խաղալիք պետության» կամ վերահսկվող սուբյեկտի, որի գործողությունները վերագրելի կլինեն արդեն վերջինիս «օժանդակող» պետությանը: Այս պարագայում արդեն բնականաբար կխախտվի միջպետական հարաբերություններում ուժի գործադրման արգելքը, քանի որ նման «օժանդակության» իրական պատճառը կլինի ոչ թե համապատասխան ժողովրդի ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրացումը, այլ մայր պետության տրոհումը, իսկ ժողովրդի՝ այլ պարագայում միջազգային-իրավական առումով չեզոք գործողությունները, վերագրվելով «օժանդակող» պետության, կդառնան հակաիրավական:

Եզրակացությունում ներկայացվում է ատենախոսական աշխատանքի արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Համապատասխան միջազգային պայմանագրերի և հռչակագրերի համեմատական և համակարգային մեկնաբանությունը ցույց է տալիս, որ արտաքին ինքնորոշման իրավունքը, որը հնարավորություն է տալիս ժողովրդին իրացնելու իր իրավունքը՝ անկախ պետականության ստեղծման ճանապարհով, սահմանափակված չէ միայն ապագադրությամբ համատեքստով և գործում է նաև արդի պայմաններում և կարող է առաջանալ ցանկացած դեպքում, երբ ժողովուրդը զրկվում է ինքնորոշումը մայր պետության տարածքային ամբողջականության շրջանակներում իրացնելու հնարավորությունից.

2. *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի* և *Գաղութային հռչակագրի* զուգահեռ ընթերցումը ցույց է տալիս, որ վերջինում օգտագործվող «երկիր» եզրույթը վերաբերում է ոչ ինքնակառավարվող տարածքներին, և հետևաբար *Գաղութային հռչակագրում* ամրագրված «երկրների տարածքային ամբողջականության» տրոհման փորձերի դատապարտումը ուղղված է ոչ թե մայր պետության տարածքային ամբողջականության պահպանմանը, այլ պետականության կայացման փուլում գտնվող սուբյեկտների տարածքի պաշտպանությանը մայր պետության ազրեսիվ գործողություններից.

3. Հաշվի առնելով միջազգային իրավունքի սկզբունքների աքսիոլոգիական նշանակությունը և գործողության եղանակը՝ վերջիններիս միջև հակասությունների վերաբերյալ տեսությունները զուրկ են որևէ իրավաբանական հիմնավորվածությունից, ինչը ապացուցվում է նաև առանձին սկզբունքների միջև անմիջական կապերի և փոխկապվածության փաստով:

4. Ուժի գործադրման արգելքը գործում է միջպետական հարաբերությունների հարթությունում միայն, և հետևաբար, թեև ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է պետությունների անմիջական ռազմական միջամտությունը ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների ազատագրական պայքարին (սակայն չի արգելում ֆինանսական և այլ տեսակի օժանդակությունը), ինքնորոշման համար պայքարող ժողովուրդը կամ ազատագրական շարժումը կաշկանդված չէ միջազգային հարաբերություններում ուժի գործադրման արգելքով, երբ առկա է մայր պետության փորձերը զինված ուժով կանխելու ինքնորոշման իրավունքի իրացումը: Նման պայքարը իհարկե կարող է դատապարտվել մայր պետության ներպետական իրավական համակարգի շրջանակներում, սակայն այդ պայքարը հաջողությամբ պսակվելու դեպքում այն մնում է իրավաբանորեն չեզոք գործողություն, որի համար չի կարող սահմանվել միջազգային-իրավական պատասխանատվություն:

5. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելու մասին կոնվենցիայի կիրառման» գործում Միջազգային դատարանը հաստատեց բոլոր պետությունների պարտավորությունը՝ կանխել միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի ոտնահարումները: Հետևաբար ինքնորոշման իրավունքի *jus cogens*, բնույթը, ինչպես նաև այդ իրավունքից բխող պարտավորությունների *erga omnes* բնույթը ստեղծում են ոչ միայն ողջ միջազգային հանրության և նրա առանձին ներկայացուցիչների իրավական շահը՝ պաշտպանելու առանձին ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը, այլ նաև միջազգային հանրության պարտավորությունը՝ ակտիվ գործողությունների (ինչպես նաև գործողություններից ձեռնպահ մնալու) միջոցով օժանդակելու ինքնորոշման իրավունքի իրացմանը:

6. Միջազգային դատարանի «*Բարսելոնա Թրեքշն*» և «*Արևելյան Թիմոր*» գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ *erga omnes* պարտավորություններն այդ իրավահարաբերությունների երրորդ կողմերին ընձեռում են դատարան հայց ներկայացնելու հնարավորությամբ (*locus standi*), ինչը երրորդ պետություններին Միջազգային դատարան հնարավորություն է տալիս դիմելու նաև ինքնորոշման իրավունքի ոտնահարման հարցերով՝ ժողովուրդների իրավունքների պաշտպանության նկատառումով:

7. Բոլոր այն դեպքերում, երբ պետականության ստեղծման համար պայքարող ոչ պետական կազմավորումն այլ պետությունից ստանում է ակտիվ ռազմական օժանդակություն և վերածվում է կախյալ «խաղալիք պետության», իրավիճակը Անվտանգության խորհրդի կողմից դիտարկվում է ոչ թե որպես ինքնորոշման դրսևորում, այլ որպես ագրեսիա ոչ պետական կազմավորմանը օժանդակող պետության կողմից: Սակայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում

տում ընդունված Անվտանգության խորհրդի բանաձևերը ուղղված չեն ԼՂՀ անկախ պետականություն ստեղծելու ձգտման դատապարտմանը: Բանաձևեր 822, 853, 874, 884-ի մեկնաբանությունը՝ տեքստի և նախապատրաստական աշխատանքների լույսի ներքո ցույց է տալիս, որ Անվտանգության խորհուրդն ըստ էության ճանաչել է ԼՂՀ ինքնուրույն (ՀՀ-ից անջատ) իրավասուբյեկտությունը և կոչ չի արել միջազգային հանրությանը չճանաչելու վերջինիս անկախության հռչակագիրը:

Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից հրապարակվել են հետևյալ գիտական աշխատանքները՝

1. Մեղրյան Զ. Շ Ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանում և միջազգային այլ ատյաններում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013.թ նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2014թ., էջեր 335-346:
2. Քոչարյան Վ. Վ, Մեղրյան Զ. Շ. Ժողովուրդների ինքնորոշման և ուժի չգործադրման միջազգային իրավական սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրը, Օրինականություն, Թիվ 80, Երևան, 2013, էջեր 54-58 (համահեղինակությամբ)
3. Մեղրյան Զ. Շ. Ինքնորոշման իրավունքի արտադատական պաշտպանության հիմնահարցերը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / Նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին/, Երևան, 2012, էջեր 551-561:
4. Մեղրյան Զ. Շ. Իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի պատմական զարգացումը և ամրագրումը միջազգային իրավունքում. համառոտ ակնարկ, Պետություն և իրավունք, թիվ 3(53), Երևան, 2011, էջեր 98-106
5. Մեղրյան Զ. Շ Արտաքին ինքնորոշման իրավունքի իրականացման իրավական նախադրյալների ամրագրումը արդի միջազգային իրավունքում, Օրենք և իրականություն, թիվ 12, Երևան, 2011, էջեր 9-11:

РЕЗЮМЕ

МЕГРЯН ЗИНАВОР ШАГЕНОВИЧ

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВА НА САМООПРЕДЕЛЕНИЕ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ

Диссертация посвящена раскрытию содержания различных проявлений принципа самоопределения народов, выяснению международных правовых механизмов их реализации. Цель данной диссертации – определение места и роли принципа самоопределения в системе современного международного права и исследование точек взаимодействия с другими принципами. В рамках диссертации особое место уделено формам судебной и внесудебной защиты права на самоопределение.

Актуальность диссертации мотивируется решением насущных проблем Республики Армения (РА) и армянского народа, а также мирным и стабильным развитием нашего региона. В частности, на международной арене до сих пор остаются нерешенными вопросы, связанные с международно-правовым статусом непризнанной международным сообществом Нагорно-Карабахской Республики (НКР), что усиливает необходимость разностороннего изучения данной области международного права.

При подготовке темы широко использовался историко-сравнительный метод исследования. Особенно в первой главе при исследовании поэтапного развития принципа самоопределения народов, от политического убеждения до правового принципа. Посредством сравнительно-правового метода сопоставлены различные международные правовые акты. Они проанализированы с помощью разных канонических толкования права, показаны многочисленные и различные проявления принципа самоопределения в виде конкретной линии поведения.

Особое место в диссертации занимает сравнительный и систематизированный анализ соответствующих международных правовых актов. Согласно ему, право на внешнее самоопределение не ограничивается только контекстом деколонизации и дает народу возможность реализовать свое право путем создания независимой государственности.

В диссертации параллельный анализ “Декларации о принципах международного права” и “Декларации о предоставлении независимости колониальным странам и народам” (Колониальная декларация) показывает, что использованный в последней термин “страна” не относится к самоуправляющимся территориям, и, следовательно, осуждение попыток разделения зафиксированного в Колониальной декларации “принципа территориальной целостности” направлено не на сохранение территориальной целостности метрополии, а на защиту территорий, находящихся в стадии становления государственности, от агрессивных действий метрополии.

В диссертации обсуждается и выявляется аксиологическое значение и метод действия принципов международного права. Теории по поводу расхождений между ними лишены каких-либо правовых обоснований, что доказывается на основе непосредственной связи между отдельными принципами и их взаимосвязью и зависимости друг от друга.

В диссертации показано, что запрет на применение силы действует только в сфере межгосударственных отношений, следовательно, несмотря на то, что современное международное право запрещает непосредственное военное вмешательство государств в освободительную борьбу народов за самоопределение (при этом не запрещая финансовую и другую помощь), запрет на применение силы в международных отношениях не мешает народу в его освободительной борьбе.

Проведенный в диссертации анализ приводит нас к следующему выводу: в деле применения “Конвенции о предотвращении и наказании преступления геноцида” Международный Суд утвердил обязательство всех государств предотвращать нарушение императивных норм международного права. Следовательно, *jus cogens* характер прав на самоопределение, а также *erga omnes* характер вытекающих из права обязательств выражают не только правовые интересы всего международного сообщества и его отдельных представителей в деле защиты реализации права на самоопределение отдельных народов, но и обязательство международного сообщества активными действиями (а также воздерживаясь от них) помогать в реализации права на самоопределение.

Проведенные в диссертации исследования, относящиеся к анализу дел Международного Суда “Барселона Трэкшн” и “Восточный Тимор” показывают, что *erga omnes* обязательства предоставляют третьей стороне в этих правовых отношениях возможность предъявить иск (*locus standi*), что позволяет третьим государствам в целях защиты прав народов обратиться в Международный Суд по вопросам нарушения прав на самоопределение.

В диссертации представлены резолюции Совета Безопасности, принятые в контексте Нагорно-Карабахского противостояния, и доказано, что они не направлены на осуждение стремления НКР к созданию независимой государственности. Анализ текста резолюций 822, 853, 874, 884 и изучение работ по их подготовке показывают, что Совет Безопасности, по сути, признал самостоятельную правосубъектность НКР (отдельно от РА) и не обратился с призывами к международному сообществу не признавать провозглашение независимости НКР.

На тему диссертации автором был опубликован ряд научных статей, в которых отражены основные тезисы диссертации. Они были представлены на заседаниях кафедры Европейского и международного права.

ZINAVOR SHAHEN MEGHRYAN

CONTEMPORARY PROBLEMS OF SELF-DETERMINATION
UNDER INTERNATIONAL LAW

SUMMARY

The dissertation is devoted to the disclosure of the content of various manifestations of the principle of self-determination of peoples, the clarification of international legal mechanisms for their implementation. The purpose of this thesis is the definition of the role and place of the principle of self-determination in the system of modern international law and investigation of points of interaction with the other principles. In the framework of the dissertation a special place is given to the forms of judicial and extrajudicial protection of the right to self-determination.

Relevance of the dissertation is motivated by the vital issues of the Republic of Armenia (RA) and the Armenian people, as well as peaceful and sustainable development of our region. In particular, in the international arena there are still unresolved issues related to the international legal status of the internationally unrecognized Nagorno-Karabakh Republic (NKR), which reinforces the need for the comprehensive study of the national science.

In the process of preparing the topic historical-comparative research method has been widely used. It has been used especially in the first chapter, studying the phased development of the principle of self-determination of peoples, from the political to the legal principle of persuasion. Various international legal acts have been compared through the comparative-legal method. They have been analyzed using different canons of interpretation of the law, numerous and various manifestations of the principle of self-determination in the form of a particular line of conduct have been focused on.

A special place in the dissertation takes the comparative and systematic analysis of the relevant international legal acts. According to it, the right to external self-determination is not limited to the context of decolonization, and gives people the opportunity to exercise its rights through the establishment of independent statehood.

The parallel analysis of the “Declaration on Principles of International Law” and the “Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples” (Colonial Declaration) shows that the term “country”, used in the dissertation, does not refer to self-governing territories, and therefore, the condemnation of attempts of the division, reflected in the Colonial Declaration “of the principle of territorial integrity” is not aimed at the preservation of the territorial integrity of the metropolis, but to protect the areas that are in the process of formation of the statehood from the aggressive actions of the metropolis.

The dissertation discusses and identifies the axiological significance and method of operation of the principles of the international law. Theories about the differences between them are devoid of any legal justification, which is proved by the direct connection between the individual principles and their relationship and dependence on each other.

The dissertation shows that the ban on the use of force is only valid in the area of interstate relations, therefore, despite the fact that the contemporary international law prohibits direct military involvement in the liberation struggle of the peoples for self-determination (while not prohibiting financial and other assistance), the ban on use of force in the area of international relations does not prevent people in their struggle for liberation.

The analysis, made in the dissertation, leads us to the following conclusion: in the application of the “Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide” the International Court has approved the obligation of all countries to prevent the violation of peremptory norms of international law. Consequently, *jus cogens* is the nature of the right to self-determination, as well as *erga omnes* is the character of the obligations arising from the right to express not only the legal interests of the entire international community and its individual representatives in the protection of the right to self-determination of the individual nations, but also the commitment of the international community active actions (as well as refraining from them) to help in the realization of the right to self-determination.

In “Barcelona Traction” and “East Timor” cases is shown that *erga omnes* obligation provide third party in these legal relations with the opportunity to sue (*locus standi*), which allows the third countries in order to protect the rights of their peoples appeal to the International Court for the violation of the rights of self-determination.

The dissertation presents the resolutions of the Security Council, adopted in the context of the Nagorno-Karabakh confrontation, and it is proved that they are not aimed at the condemnation of aspirations of the NKR to found an independent state. Analysis of the text of resolutions 822, 853, 874, 884 and study of works on their preparation indicate that the Security Council has, in fact, recognized the separate legal personality of the NKR (apart from the RA) and did not appeal to the international community not to recognize the declaration of the independence.

The author has published several scientific articles, related to the topic of the dissertation, which reflect the key points of the dissertation. Those have been presented at the sessions of the Chair of the European and International Law.